ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2025 թվականի N 765 - Ա

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասով, «Ասիական զարգացման բանկի հիմնադիր համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2005 թվականի մայիսի 24-ի որոշմամբ, ինչպես նաև «Ասիական զարգացման հիմնադրամի տասներեքերորդ և տեխնիկական աջակցության հատուկ հիմնադրամի ութերորդ կանոնավոր համալրման մասին» Ասիական զարգացման բանկի կառավարիչների խորհրդի 2024 թվականի սեպտեմբերի 29-ի N 427 որոշման պայմաններով և դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հավանություն տալ Ասիական զարգացման հիմնադրամի տասներեքերորդ և տեխնիկական աջակցության հատուկ հիմնադրամի ութերորդ կանոնավոր համալրման շրջանակներում Հայաստանի Հանրապետության ներդրման գործիքին:

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության անունից հանդես գալով որպես լիազորված պաշտոնատար անձ՝ 30-օրյա ժամկետում ստորագրել «Ասիական զարգացման հիմնադրամի տասներեքերորդ և տեխնիկական աջակցության հատուկ հիմնադրամի ութերորդ կանոնավոր համալրման մասին» ներդրման գործիքը՝ համաձայն հավելվածի.

2) Ասիական զարգացման հիմնադրամի տասներեքերորդ համալրման և տեխնիկական աջակցության հատուկ ֆոնդի ութերորդ կանոնավոր համալրման շրջանակներում Հայաստանի Հանրապետության մասնաբաժնի վճարումը կատարել անտոկոս մուրհակ տրամադրելու եղանակով՝ համաձայնեցնելով Ասիական զարգացման բանկի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

12.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ